

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԿ ՂԱՍԱԿԱՆՆԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՅԱՅ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՍԲ

ՌՈՒԶԱՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայ-ռուսական գրական առնչություններն ունեցել են ինքնատիպ զարգացում, որը պայմանավորված էր ոչ միայն հայ ժողովրդի երկու հատվածների հասարակական-քաղաքական կյանքով, այլև մշակութային ազդեցություններով ու կապերով, ժամանակի գեղագիտական պահանջներով: Հայտնվելով երկու հզոր կայսրությունների տիրապետության տակ՝ հայ ժողովուրդը փորձել է կանոնակարգել իր մշակութային կյանքը, համախմբվել եկեղեցու շուրջը, բացել դպրոցներ, կրթական հաստատություններ, հրատարակչություններ և ազգի առաջընթացը առավելապես կապել այդ ամենի զարգացման հետ: Այդպիսի կենտրոններ են եղել արևելահայության համար Թիֆլիսը, Մոսկվան, Պետերբուրգը, Նոր Նախիջևանը, արևմտահայության համար՝ Կ. Պոլիսը, Վենետիկը, Վիեննան, Փարիզը և այլն: Մշակութային կարևոր երևույթներին շատ հաճախ արձագանքել է և՛ արևելահայ, և՛ արևմտահայ մտավորականությունը:

Արևմտահայ և արևելահայ պարբերական մամուլը աստիճանաբար դարձել է այն հայելին, որտեղ արտացոլվել են մեր ժողովրդի երկու հատվածների հասարակական-քաղաքական, մշակութային կյանքը, գաղափարական պայքարը: Օսմանյան սահմանադրության ընդունման նախաշեմին աննախընթաց վերելք է ապրել արևմտահայ պարբերական մամուլը և դարձել ազգային լիբերալ-դեմոկրատական հայացքների ու գաղափարների անմիջական կրողն ու արտացոլողը: Պատահական չէ, որ թուրքական իշխանությունները արևմտահայ մամուլին վերաբերվել են իբրև ազգային ինքնագիտակցության գործոնի և հնարավոր ամեն ինչ արել՝ խոչընդոտելու նրա գործունեությունը: Գ. Չատինյանն իր հոդվածում¹ անդրադառնում է նաև Հ. Պարոնյանի «Լրագրական օրենք» ծանուցմանը, որտեղ նա ներկայացնում է, թե ինչպիսի մտադրություն ունենում են օսմանյան վարչակարգը արևմտահայ և ընդհանրապես կայսրությունում լույս տեսնող մամուլի նկատմամբ. «Հոդված Ա. Բոլոր լրագրերը դադարեցնել: Հոդված Բ. Խմբագիրներին ալ անոթության վարժեցնել: Հոդված Գ. Աչքերու համար տեսչություն մը դնել, որպեսզի անհրավություն մը տեսնելուն պես՝ զանոնք տեսնելը դադարեցնեն: Հոդված Դ. Լրագիր մը իր ուզածը ամենայն ազատությամբ կրնա խորհիլ, բայց չկրնար խոսիլ: Հոդված Ե. Լրագիր մը իր խմբագրին վրա կրնա հարձակիլ»²: Ուշագրավ է նաև այն փաստը, որ այդ թվականներ-

¹ Տե՛ս Գ. Չատինյան, Արևմտահայ պարբերական մամուլի իրական կացության պատմությունից, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 2006, № 3, էջ 198-207:

² Մանրամասն տե՛ս Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ. 8, Եր., 1972, էջ 184:

րին, օրինակ, թուրքական երկու պարբերականի դիմաց արևմտահայ մանուկը ուներ վեց տպագիր օրգան՝ «Արշալույս Արարատյան», «Մասիս», «Երևակ», «Մեղու», «Մուսայք մասյաց» և «Քնար արևելյան»: Հետագայում հրապարակ են իջնում նաև «Օրագիր», «Լրագիր», «Փունջ», «Ձեփյուռ», «Արևելյան մամուլ», «Թատրոն», «Ծաղիկ», «Լույս» և այլ պարբերականներ: Նշենք նաև, որ արևմտահայության կյանքին, ապագային վերաբերող գաղափարական պայքարը, հակամարտությունը առաջադիմական և պահպանողական հայացքներ ունեցող մտավորականության միջև արտացոլվում էին հատկապես պարբերական մամուլում, և առաջադիմական ամեն մի նոր գաղափար, տեսակետ, կարծիք քննադատվում էր պահպանողական և պետական վարչակարգին հարող պարբերականների կողմից:

Արևմտահայ մամուլում Ռուսաստանի պատմությանը, կյանքին, քաղաքականությանը, մշակույթին և հատկապես գրականությանը վերաբերող նյութերի կարելի է հանդիպել գաղափարական տարբեր կողմնորոշումներ ունեցող պարբերականներում: Սակայն դրանցից յուրաքանչյուրն անդրադառնում էր ռուս այն գրողներին կամ նրանց ստեղծագործություններին, որոնք համահունչ էին տվյալ պարբերականի գաղափարական ուղղվածությանը, հետաքրքրություններին, զեղագիտական չափանիշներին: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ հետաքրքրությունը համազգային երևույթ էր, որն իր ուրույն դրսևորումներն ունեցավ արևմտահայության պատմության բարդ, հակասական ու դժվարին կյանքի տարբեր փուլերում: Հատկապես խորհրդային տարիներին այդ հարցին վերաբերվում էին բավականին վերապահունով. առավել տարածված էր այն կարծիքը, որ ռուս գրականությունից արևմտահայերեն թարգմանությունները արված են ֆրանսերենից, և այն ամենը, ինչ տպագրվել է ռուս գրականության և ռուս գրողների մասին, ունեցել է տարերային բնույթ: Մինչդեռ պարզվում է, որ միանգամայն այլ էր պատմական իրողությունը. արևմտահայ մտավորականությունը անգամ քաղաքական ծանր պայմաններում շարունակում էր ապրել համաշխարհային քաղաքակրթության չափանիշներով՝ ազգի առաջընթացի հիմքում դնելով կրթության, լուսավորության, մշակութային խնդիրները:

Ռուս գրողների և նրանց ստեղծագործությունների մասին նյութեր պատրաստելու երեք հիմնական աղբյուրներ կային. ա) նյութեր՝ ստեղծված արևմտահայ մտավորականության՝ գրողների, թարգմանիչների, գրականագետների ջանքերով, բ) նյութեր՝ վերցված արևելահայ աղբյուրներից, և գ) նյութեր՝ քաղված արևմտաեվրոպական պարբերականներից, հրապարակումներից և հրատարակություններից: Հարկ է նշել նաև, որ արևմտահայ-ռուսական գրական առնչություններն ունեցել են զարգացման երեք կարևոր փուլեր կամ շրջաններ՝ 1840-1880-ական, 1880-1900-ական և 1900-1914-ական թվականներ: Դրանք օսմանյան սահմանադրության, 1880-ական թվականներին արևմտահայության դեմոկրատական շարժումների և երիտթուրքերի նոր սահմանադրության արդյունք էին, որոնք ազատության, դեմոկրատիայի նոր հույսեր տվեցին արևմտահայությանը:

Կարծում ենք՝ արևմտահայ պարբերականների շարքում, որոնցից յուրաքանչյուրն իր դերակատարումն է ունեցել այդ տարիների հայության հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում, պետք է առանձնաց-

Նել Վենետիկի Ս. Ղազար կղզու միաբանության «Բազմավեպ» ամսագիրը, որի հիմնադիրն էր Գաբրիել արքեպիսկոպոս Այվազովսկին: Ամսագրի խմբագիրները առանձնահատուկ ուշադրություն են դարձրել ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային գրականության և գրական առնչությունների ներկայացմանն ու տարածմանը: 1844 թ. «Բազմավեպում» առաջին անգամ տպագրվեց Ի. Կռիլովի «Երաժիշտը» («Կվարտետ») առակը, որից հետո պարբերաբար ներկայացվում էին նաև ռուս դասական գրականությանը վերաբերող նյութեր. գրականություն, որն իր մարդասիրական գաղափարներով, համամարդկային խնդիրների ընդգրկմամբ, հավատի, անհատի հոգևոր հարության, երկրի վրա նրա ունեցած դերի մասին հարցադրումներով որոշակի հետաքրքրություն էր ներկայացնում Մխիթարյանների համար: Բարոյական ու հոգևոր արժեքների, արդարության ու մարդկային ճիշտ փոխհարաբերությունների որոնումները, որոնք արժարժվում էին ռուս դասականների ստեղծագործություններում, շատ առումներով համահունչ էին ամսագրի կրոնաբարոյագիտական, փիլիսոփայական ու գաղափարական ուղղվածությանը: Ի. Կռիլով, Ի. Դմիտրիև, Գ. Դերժավին, Ա. Պուշկին, Մ. Լերմոնտով, Ն. Գոգոլ, Ի. Տուրգենև, Ն. Նեկրասով, Լ. Տոլստոյ, Ա. Զեխով, Մ. Գորկի, Լ. Անդրեև, Ա. Տոլստոյ և ուրիշներ. ահա ռուս գրողների ոչ լրիվ ցանկը, որոնց մասին կենսագրականներ, ակնարկներ, գրական-քննադատական հոդվածներ, գրախոսություններ և հաղորդումներ են տպագրվել «Բազմավեպում»: Առանձին դեպքերում դրանք ուղեկցվել են նաև ոչ մեծ ծավալի ստեղծագործությունների թարգմանություններով, ռուսական պատմությանը, կյանքին ու մշակույթին վերաբերող հոդվածներով: Ի դեպ, հարկ է նշել, որ «Բազմավեպն» այն հեղինակավոր ամսագրերից էր, որ կարդում էին և՛ արևելահայության, և՛ արևմտահայության շրջանում³:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ամսագրում ներկայացվել են հատկապես այնպիսի հեղինակներ, որոնց ստեղծագործությունները վերաբերում են Ռուսաստանի պատմության խոշոր իրադարձություններին: Այսպես՝ 1846 թվականին «Բազմավեպի» «Բանասիրական տեղեկություն» բաժնում ներկայացվում է 18-րդ դարի ռուս հայտնի գրող Ի. Դմիտրիևը: Կենսագրական որոշ տեղեկություններից հետո բարձր գնահատելով գրողին, որը «հավասար քաջությամբ է շարժում զենքն ու գրիչը», համեմատելով նրան մեր Գրիգոր Մագիստրոսի հետ՝ հեղինակը գրում է «Երմակ» կոչվող, ինչպես հեղինակն է ասում, «ոյուցազնական տաղի մասին»: «Երմակ անունով քաջ մարդը,- գրում է նա,- Դոնսքի ըսված խազախներուն աթամանը՝ այսինքն զորապետն էր, Սիպիր կամ Սիպիրիա կոչվող ընդարձակ երկիրը տիրեց, ու ետքը ռուսաց Իվան Դ թագավորին ընծայեց»: Յեղիմակը, որի անունը նշված չէ (ի դեպ նման ձևով վարվում էին խմբագրության աշխատակիցները, ովքեր իրենց նյութերը հաճախ տպագրում էին անստորագիր) միաժամանակ անդրադարձնում է պոեմի թարգմանությանը՝ ընդգծելով, որ «Երմակ»-ը թարգմանելիս «հանգի կատարելությունը թարգմանության ճշտությանը կը զոհաբերե»⁴:

³ Մանրամասն տես **Ռ. Տեր-Գրիգորյան**, Ռուս դասականները «Բազմավեպի» էջերում, «Բազմավեպ», Վենետիկ, 2004, № 1-4, էջ 399-415:

⁴ «Բազմավեպ», Դ տարի, 1846, № 23, էջ 359-362:

Ուշադրության արժանի են հատկապես Քերովբե վարդապետ Քուշնե-
րյանի հողված-ուսումնասիրությունները, որոնց կից նա շատ հաճախ ներկա-
յացնում էր իր թարգմանությունները: Ռուսերենի, ռուս գրականության և
հատկապես պոեզիայի հրաշալի իմացությունը, ինչպես նաև թարգմանական
գրականության հսկայական դերի արժեքավորումը ազգային գրականության
զարգացման, հարստացման գործում, կարծում ենք, իրենց որոշակի դերն ու-
նեցան «Բազմավեպի» էջերում ծավալած նրա թարգմանական գործունեու-
թյան վրա: Ռուս դասական գրողներին նվիրված կենսագրականներում, հող-
վածներում, գրախոսություններում, ինչպես նաև ակնարկային բնույթի վեր-
լուծություններում Քուշնեյանը գրողներին մշտապես ներկայացնում է
ապրած ժամանակի մեջ, նրանց ստեղծագործություններում բարձրացվող
հարցադրումները դիտում ժամանակի հասարակական-քաղաքական, սո-
ցիալական, գեղագիտական խնդիրների ու պահանջների հուլովույթում:

1876 թ., երբ նշվում էր Ա. Պուշկինի մահվան 40-ամյակը, երբ Ռուսաս-
տանում նորովի էին ներկայացնում ու արժևորում նրա դերը ռուս գրակա-
նության զարգացման գործում, Բ. Քուշնեյանը ևս անդրադառնում է այդ
խնդրին. «Անաչառ քննիչք կը դասեն զԲուշքին Ռուսիոյ բանաստեղծներուն
առաջին կարգը. ունի միտք, աշխոյժ երեւակայութիւն, ընտիր լեզու, վսեմ
պարզութեամբ խառնուած...», - գրում է նա իր «Աղէքսանդր Բուշքին» հող-
վածում: Քուշնեյանը հատկապես բարձր է գնահատում Պուշկինի «Բորիս
Գոդունով» ողբերգությունը, որը «Ռուս թատերագոյ մեջ առաջին տեղն ու-
նի», պատմության մեջ անհատի և ժողովրդի դերի գնահատմամբ, կենտրո-
նածիփ պետություն ունենալու, պետականության պահպանման առումով⁵:
Բացի Կռիլովից, Պուշկինից, Լերմոնտովից՝ նա հայ ընթերցողին է ներկա-
յացրել նաև իր ժամանակակիցներին՝ Նեկրասովին, Տուրգենևին: Նա բա-
ցառիկ վերաբերմունք ուներ Նեկրասովի անհատականության և նրա բա-
նաստեղծական ժառանգության նկատմամբ: Օրինակ, 1878 թվականին
«Բազմավեպում» տպագրած իր հողվածում նա ուշադրություն է դարձնում
Նեկրասովի պոեզիայի հատկապես թեմատիկ և գաղափարական ուղղվա-
ծությանը՝ պոետի կոչումը տեսնելով ժողովրդի պատմության, սոցիալական
վիճակի պատկերման մեջ. «Նեքրասովն իր հանճարը և գրիչը նվիրեց ժո-
ղովրդական նկուն և հարստահարեալ մասին, պաշտպանելով զնոսա և ող-
բալով և հանդիմանելով զհարստահարիչս,- գրում է նա: - Նեքրասով առա-
ջինն եղավ, որ համարձակորեն կրցավ բացատրել գրով՝ այն ալ ոտանա-
վոր չափմամբ, հասարակաց զգացումը և այն մտատանջ ձգտումները որ
ազգը կը խլրտեին, ողորկ և ոգելից տողերու տակ ամփոփեց»⁶:

Կարծում ենք՝ արևմտահայությանը ռուս դասական գրականությունը
ճանաչել տալու գործին զգալիորեն նպաստեց նաև Գաբրիել արքեպիսկո-
պոս Այվազովսկու գրական, գիտական, մանկավարժական և թարգմանա-
կան գործունեությունը: Եվ որքան էլ ժամանակակիցները և հատկապես
խորհրդային գրականագիտությունը նրան բնութագրում էին որպես «հետա-

⁵ Տե՛ս «Բազմավեպ», 1876, № 1-12, էջ 248-250:

⁶ Գ. Բ. վարդապետ Քուշնեյանի գրականագիտական և թարգմանական գործու-
նեության մասին մանրամասն տե՛ս՝ Ռ. Տեր-Գրիգորյան, Մխիթարյան միաբանության
արժանի զավակը, «Բազմավեպ», Վենետիկ, 2005, № 1-4, էջ 394-411:

դիմական», «կղերական», «պահպանողական» և ավելի շատ մերժում, քան գնահատում, այնուհանդերձ՝ այսօր, ժամանակի հեռավորությունից շատ ավելի են արժևորվում Այվազովսկու ազգանվեր գործերը, ինչպես նաև ռուս դասականներին հայ և հատկապես արևմտահայ ընթերցողին ներկայացնելու նրա թարգմանական աշխատանքը: Գ. Այվազովսկու Ի. Կռիլովի առակների արևմտահայերեն թարգմանությունների ընդգրկումն ժողովածուն (մոտ 305 առակ), ինչ խոսք, իրադարձություն էր արևմտահայության մշակութային կյանքում⁷: Այդ կապակցությամբ «Արեւելեան մամուլում» Կամսար ստորագրությամբ տպագրվում է գրախոսություն, որի հեղինակը գրում է. «Գրականության մեջ նշանավոր տեղ մը կբռնե և մեծ ներգործություն ունի ժողովրդոց մտաց և բարուց վրա՝ իբրև զվարճալի և միանգամայն ազդեցիկ խրատ և հորդոր ի բարին... Ի. Կռիլովի առակները գեր. Գ. Այվազյանի շնորհիվ ամբողջ թարգմանված են՝ ի հայ աշխարհիկ բարբառ՝ արամեանի մաքուր տպագրությամբ»⁸: Ի դեպ, գրքի առաջաբանում Գ. Այվազովսկին բարձրացնում է հարցեր, որոնք այդ տարիներին և՛ արևմտահայության, և՛ արևելահայության համար չափազանց արդիական էին: Նա կարևոր էր համարում ինչ լեզվով թարգմանելու հարցը, քանզի այդ տարիներին կատաղի պայքար էր մղվում գրաբարի և աշխարհաբարի կողմնակիցների միջև: Բարձր գնահատելով գրաբարը՝ որպես առավել կատարյալ լեզու, նա հասկանում էր, որ առակները պետք է թարգմանել ժամանակակից խոսակցական լեզվով, քանի որ «գրաբարով, որն այժմ ոչ ևս խոսակցության լեզու է մեր ազգին մեջ, շատ դժվարին է (չասեն թե անհնարին) դուրս ցատկեցնել բնագրին կենդանի ու վարվուռն դարձվածքները անոր համար...»: Նա գտնում էր, որ թարգմանությունները պետք է հասկանալի լինեն ոչ միայն «չափահասից և ուսումնականաց, այլ տղայոց և ռամկաց՝ արանց և կանանց, որ կարևոր են դյուրինաց գրվածոք»⁹:

Ռուսաստանի, ռուսական մշակույթի և հատկապես գրականության հանդեպ արևմտահայ մտավորականության հետաքրքրության նոր ալիքը պայմանավորված էր պատմական-հասարակական, քաղաքական և մշակութային այն հարաբերություններով, որոնք ձևավորվեցին 19-րդ դարի 80-ական թվականներից: Սան Ստեֆանոյի պայմանագրից հետո արևմտահայ առաջադեմ մտավորականությունը՝ թուրքական լծից ազատագրվելու հույսը սկսեց կապել հյուսիսային քրիստոնյա մեծ տերության՝ Ռուսաստանի հետ. «Այժմ մեր գլխավոր առարկաներեն մին եղած է Ռուսիայի քաղաքականությունը և մենք շրջահայեցությամբ կուզենք օգուտ քաղել դրանից... Մենք ավելի հույս ունենք Ռուսիայի, քան թե ուրիշ պետության պաշտպանության վրա...», - գրում է արևմտահայ նշանավոր գրող, հրապարակախոս, քննադատ Արփիար Արփիարյանը (Հայկակ) «Մշակում» տպագրած իր հոդվածում (1878, № 102): Կարծում ենք, որ 1880-ականների երիտասարդ սե-

⁷ Տե՛ս Գ. Այվազեան, Առակք Յովհաննու Քռիլովի, Կ. Պոլիս, 1870:

⁸ Տ. Կամսար, Առակք Քռիլովի, թարգմանութիւն գեր. Այվազեանի, «Արեւելեան մամուլ», Ձմյուռնիա, 1872, № 2, էջ 65-67:

⁹ Գ. Այվազովսկու գրական և թարգմանական գործունեության մասին մանրամասն տե՛ս Ռ. Տեր-Գրիգորյան, Գաբրիել արքեպիսկոպոս Այվազովսկին Ի. Կռիլովի առակների թարգմանիչ, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 2006, № 3 (617), էջ 94-105:

րունդը, որը քաղաքական նոր կողմնորոշումներ ուներ, միաժամանակ հետաքրքրվում էր նաև Եվրոպայում և Ռուսաստանում զարգացող ու համաշխարհային գրականության մեջ իր ուրույն խոսքն ասող իրապաշտական գրականությամբ և գրաքննադատությամբ: Այս տարիներին էր, որ արևմտահայ առաջադեմ մտավորականության տեսադաշտում հայտնվեց ռուս դասական գրականությունը: «Արևելք», «Մասիս», իսկ ավելի ուշ «Հայրենիք» պարբերականների խմբագիր, գրող և թարգմանիչ Ա. Արփիարյանը և նրա համախոհներ Լ. Բաշալյանը, Տ. Կամսարականը, Ե. Տեմիրճիպաշյանը, Ե. Օտյանը ազգային գրականության զարգացման համար ընտրեցին երկու ուղղություն՝ ինքնուրույն և թարգմանական:

Եվրոպայում ռուս գրականության ունեցած մեծ հռչակը Լ. Բաշալյանը կապում էր երեք անունների հետ՝ Տուրգենևի, Դոստոևսկու և Տոլստոյի, որոնք, ըստ նրա, «դասվում են մարդկային մտքի բարձրագույն իշխանների շարքը»: Գտնելով, որ արևմտահայ ընթերցողին պետք է գաղափար տալ ռուս հանճարների «կյանքի և գործի» մասին, նա առաջիկաներից մեկն էր, որ բարձր գնահատելով ֆրանսիացի գրականագետ Վոքյուի «Ռուսական վեպ» գիրքը՝ այնտեղից տեղեկություններ էր քաղում ռուս դասականներին՝ մասնավորապես Տուրգենևին նվիրված իր հոդվածների համար:¹⁰

Առաջ քաշելով գրականության գաղափարայնության հարցը, որի նպատակը ժողովրդին ծառայելն է, Արփիարյանը, ինչպես նաև արևմտահայ և արևելահայ մտավորականներից շատերը, ազգային գրականության սնման, հարստացման կարևորագույն ուղիներից մեկը համարում էին հասարակական կյանքը և արտաքին գրական ազդեցությունները՝ թարգմանությունները: Անդրադառնալով ռուս գրականությանը՝ Արփիարյանը գրում է. «...Ինչ որ ռուս գրականությունը կընէ ռուս ժողովրդի համար, հայ գրականագետներն ալ նույնը կփորձեն ընել մեր ժողովրդի համար»:¹¹

Ռուսական իրապաշտական արձակում, ինչպես գրում էր Արփիարյանը, երևում էր որջ Ռուսաստանը: Ռուսական վեպում այն ներկայանում էր իր բազմազանության և ամբողջության մեջ, արտացոլում այդ երկրի հակասությունները: «Ռուսաստանում,- գրում է Արփիարյանը,- գրականությունը ժամանցի նյութ չէ, այլ մտքերի, սրտի վրա ազդող հզոր ուժ...»:¹²

Համեմատելով ռուս և ֆրանսիական գրականությունները՝ Արփիարյանը Արփիարյանը շատ ավելի «լուրջ և ծանրակշիռ որակներ էր տեսնում» ռուս գրականության մեջ: Արփիարյանի այդ մոտեցումն, անշուշտ, պայմանավորված էր նրա քաղաքական հայացքներով, որոնք հակաանգլիական և հակաօսմանյան բնույթ ունեին, քանզի նա վստահ էր, որ այդ ճանապարհով հայկական հարցը երբեք լուծում չի ստանա. թուրքական պետությունը միշտ էլ ջարդերով է ավարտել արևմտահայության բարձրացրած քաղաքական հարցերի լուծումները: Միաժամանակ, Ա. Արփիարյանը որոշակիորեն տարբերակում էր չինովնիկական Ռուսաստանը ռուս ժողովրդի

¹⁰ Տե՛ս Լ. Բաշալյան, Ռուսական հոգին, «Մասիս», 1889, էջ 127-129, նույնի՝ Ռուսական գրականություն. Իվան Թուրկենեֆ, «Մասիս», 1980, № 3932, հունվ. 1, № 3933, հունվ. 15, № 3934 փետր. 1:

¹¹ «Մասիս», 1989, № 3924:

¹² «Մասիս», 1890, № 3932:

կրթված, լուսավորյալ մասից. «... Ռուս ժողովուրդը բարի ժողովուրդ մըն է և Ռուսիո հայերն այդ ժողովուրդի սերն ու հարգանքը գրավելու համար ամեն միջոց ի գործ դնելու պատրաստված են»¹³:

Արևմտահայ գրականությունը ռուսական առաջավոր մշակույթի հետ կապելու նպատակով, ինչպես նաև հավատարիմ մնալով իր որդեգրած սկզբունքներին ու ծրագրերին՝ Արփիարյանն իր խմբագրած «Արևելք», «Մասիս» և «Հայրենիք» պարբերականներում սկսում է հետևողականորեն տպագրել ռուս գրողների կյանքին, ստեղծագործություններին նվիրված կենսագրական և քննադատական բնույթի հոդվածներ, ոչ մեծ ծավալի հոդված-ուսումնասիրություններ, հոբելյաններին, գրական հրապարակումներին վերաբերող տեղեկատվական հաղորդումներ, ինչպես նաև՝ առանձին ստեղծագործությունների թարգմանություններ¹⁴: Ընդ որում՝ այդ նյութերը կան ստեղծվում էին արևմտահայ գրողների, գրականագետների և թարգմանիչների կողմից, կան վերցվում էին ֆրանսիական և ռուսական աղբյուրներից և կան՝ արևելահայ պարբերականներից: Կարևոր տեղ և նշանակություն էր տրվում այն նյութերին, որոնք ստեղծվում էին արևմտահայ գրական շրջանակներում, արևմտահայ մտավորականների ջանքերով:

Կարծում ենք, արևմտահայ մտավորականությանը ռուս գրականությունը գրավում էր հոգևոր և բարոյական արժեքների վրա հիմնված իր գաղափարական բովանդակությամբ, ժողովրդայնությամբ, ժողովրդի ոգին հասկանալու և պատմության մեջ նրա դերի գնահատմամբ, ինչպես նաև հասարակական, քաղաքական, սոցիալական հարցերի այն խորը ու բազմակողմանի ընդգրկմամբ, որը, ինչպես նշում է գրականագետ Գ. Ստեփանյանը, բնորոշ էր 19-րդ դարի 80-ական թվականների արևմտահայ իրականությանը¹⁵:

Ինչ խոսք, 1880-ական թվականներին Ռուսաստանին, ռուսական մշակույթին և ռուս գրականությանն անդրադառնալը, որը պայմանավորված էր արևմտահայ իրականության մեջ տեղի ունեցող հասարակական և մշակութային վերելքով, ավելի խորացավ և մեծ թափ ստացավ հատկապես Թուրքիայի նոր սահմանադրության ընդունումից հետո: Պուշկինի, Լերմոնտովի բանաստեղծությունները հատկապես հոբելյանական տարեթվերի առիթով թարգմանվում և տպագրվում էին արևմտահայ պարբերականներում («Հայրենիք», «Մասիս», «Շող», «Արևելք», «Բյուրակն», «Ծաղիկ», «Արևելյան մամուլ», «Հանդես ամսօրյա», «Անահիտ»), նրանց մասին գրում էին կենսագրական և գրականագիտական հոդվածներ: Հոդված-ուսումնասիրություններում երբեմն զուգահեռ էր անցկացվում երկու բանաստեղծների միջև: Երբ նշվում էր Ա. Ս. Պուշկինի ծննդյան 100-ամյա-

¹³ «Մասիս», 1887, № 3870:

¹⁴ Ա. Արփիարյանը և նրա համախոհները որոշեցին նպաստել քաղաքականապես տարբաժան հայ ժողովրդի երկու հատվածների՝ արևելահայության և արևմտահայության հոգևոր-մշակութային մերձեցմանը: Ըստ նրանց ծրագրի՝ արևելահայ իրականությունը լավ ճանաչելու համար արևմտահայ ընթերցողին պետք էր ծանոթացնել այն մշակույթին ու գրականությանը, որն իր գործի ազդեցությունն էր թողնում արևելահայ մշակույթի և նրա զարգացման ընթացքի վրա: 1889 թ. Ա. Արփիարյանը, հանրագումարի բերելով այդ ուղղությամբ արվածը, նշում է, որ «անհրաժեշտ է ուսումնասիրել ռուսական ոգին, գրականությունը, օրենքներն ու իշխանությունը և դրանց ազդեցությունը Արարատ-Կովկաս հայերի վրա»:

¹⁵ Տե՛ս «Սովետական գրականություն և արվեստ», 1947, էջ 102-109:

կը, միայն «Արևելքում» 1899-ին տպագրվում են «Ա. Ս. Պուշկին», «Ա. համբույր», «Կովկասյան կյանք», «Պուշկինի հոբելյանը հայրենիքում» հոդվածները, իսկ «Հանդես ամսօրյայում»՝ «Պուշկին-ռուս բանաստեղծ» (Կ. Տուրյան), «Անահիտում»՝ «Բուշքին և Միցքևիչ» (Ա. Չոպանյան) հոդվածները: Կ. Տուրյանը, օրինակ, իր հոդվածում փորձել է ներկայացնել պոետի ներաշխարհը, հոգևոր կյանքը, նրա վերաբերմունքն արտաքին բարդ ու հակասական երևույթների նկատմամբ. «Հետաքրքրական է, որ իր կյանքին աղմկալից օրերուն մեջ ալ Բուշքին կարողացած է ամփոփ մտավոր կյանք ունենալ... իբրև գրական մարդ համեստ է, քաշված, փափուկ սրտի տեր և բեղմնավոր գրող... Իր ամենահաջող բանաստեղծություններն անոնք են, որոնք գրված են զինքը շրջապատող հանգամանքե կրած ուղղակի տպավորության տակ»: Հոբելյանական տարում տպագրված նյութերից բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում Ա. Չոպանյանի «Բուշքին և Միցքևիչ» հոդվածը: Անդրադառնալով սլավոն երկու բանաստեղծների կյանքին ու ստեղծագործությանը՝ Ա. Չոպանյանը գրում է. «Բուշքին մարդկության համար ուրիշ բան չէ, բայց եթե նուրբ արվեստագետ մը, որուն երգի մեջ ժողովրդի մը զգայությունը նոր կը սկսի կազմակերպուիլ... Բուշքին մեզ կը շահագրգռե իբրև այս դարու տասը-քսան տաղանդավոր քնարերգուներեն...»: Նա գտնում էր, որ Պուշկինը հող նախապատրաստեց ռուսական ռեալիզմի համար, որի շարունակողները պետք է լինեին Գոգոլը, Դոստոևսկին, Տուրգենևը, Տոլստոյը: Համեմատական զուգահեռներ անցկացնելով Պուշկինի և Միցքևիչի պոեզիայի միջև, համաշխարհային պոեզիայում առանձնահատուկ տեղ հատկացնելով Միցքևիչին՝ Չոպանյանը գրում է. «Միցքևիչը իր ժողովրդի հանճարի բարձրագույն արտահայտությունը եղավ, Բուշքին ռուսական գիտակցությունն է, որ նոր կարթնա ծանրածանր շղթաներու տակ կապված, ամեն քայլուն բիրտ պատերու բախվելով, որ անոր թռիչքը կկասեցնեն... Բուշքինին մեծ արժանիքը այդ դժոխային պայմաններուն մեջ ազատասեր հոգու մը զսպված ծարավը զգացած ըլլալն է և իր գործովը՝ որ ուրվագիծ մը և հրավեր մըն է՝ ծնունդ տված ըլլալը բուն ռուսական ազատ մտքին...»¹⁶:

Ուշագրավ է նաև «Բազմավեպում» (1905, № 10) Հ. Ս. Երեմ ստորագրությամբ տպագրված «Պուշկին և Լերմոնտով» հոդվածը: Գրախոսելով Ա. Ծատուրյանի «Ռուս բանաստեղծներ» գիրքը՝ հոդվածագիրը արևմտահայ ընթերցողին ծանոթացնում է «մեղեդիներու հոգեբանությանը»: «Լերմոնտով և Պուշկին,- գրում է նա,- իրարմե անբաժան, դյուբիչ քնարներ են, իրենց նոթաները կհասկանա ամենեն հետին անուս գեղջուկը, սրտացավ, անպաճույճ, անկաշկանդ պարզություն մը ունին և այդ պարզության մեջն է իրենց դասական համբավը...»: Վերլուծելով Պուշկինի և Լերմոնտովի հատկապես խոհափիլիսոփայական բանաստեղծությունները՝ հեղինակը ցույց է տալիս այն ներքին տագնապները, որոնք փոթորկում էին երկու բանաստեղծներին, կյանքի, աշխարհի ու բնության հավերժության նրանց ինքնատիպ պատկերացումները: Ռուս բանաստեղծի նման հեղինակը հարցնում է. «... բայց կա՞ իրական ազատություն. ազատ չէ արժիվը, շանթը ու փոթորիկ զինքը կհալածեն, ազատ չեն բռնակալները. կասկած,

¹⁶ Ա. Չոպանյան, Բուշքին և Միցքևիչ, «Անահիտ», 1899:

երկյուղ, խիղճ զիրենք կալանավորած են: Եվ ո՞վ է ազատ. Թուլթոյի մշակները... թե Գոգոլի թափառաշրջիկ չարքաշության զավակները...»¹⁷:

Ինչպես նշեցինք, արևմտահայության շրջանում ռուս դասական գրականությունը ճանաչելու և պորպագանդելու գործընթացն ընթանում էր երկու ուղղությամբ՝ գրական-քննադատական և թարգմանական: Շատ հաճախ դա արվում էր զուգահեռաբար. թերթում կամ ամսագրում ծանուցվում էր ռուս գրականությունից կատարվող թարգմանության կամ տպագրության մասին, այնուհետև հաջորդ համարներում տպագրվում էր գրականագիտական հոդված-ուսումնասիրություն տվյալ գրողի գրական ժառանգության, նրա ստեղծագործությունների վերլուծության մասին, տրվում էին գնահատականներ, արվում էին եզրակացություններ, որոնք, անշուշտ, համահունչ էին ժամանակի պահանջներին: Երբեմն ռուս գրողը ներկայացվում էր հոդվածաշարով (հաջորդական մասերով): Այսպես, օրինակ, Մ. Լերմոնտովի «Դասալիքը» պոեմի թարգմանությունից և տպագրությունից հետո այնքան մեծ էր ընթերցողների հետաքրքրությունը ռուս բանաստեղծի անձի, նրա ստեղծագործությունների հանդեպ, որ Ա. Արփիարյանն անմիջապես հաջորդ համարում նրա մասին հոդված տպագրեց. «Հարուն ցնցեց շատ սրտեր,- գրում է Արփիարյանը,- ամենուր տեղեկություններ կուզեն Լերմոնտովի վերաբերյալ: Այդ հետաքրքրությանց կատարյալ գոհացում տալ մեզ դժվար է, սակայն կհաղորդենք ինչ որ գիտենք, օգտվելով օտարագրի մատենագիրներեն, մանավանդ Գրիգոր Նիկողոսյանեն, որի ներշնչման կը պարտինք «Դասալիքի» թարգմանությունը»¹⁸: Արփիարյանի հոդվածաշարը նվիրված է Լերմոնտովի կենսագրությանը, նրա առանձին ստեղծագործություններին, որոնց վերլուծությունը բխում էր նրա քաղաքական դիրքորոշումից, Կովկասի և կովկասյան կռիվների մասին նրա վերաբերմունքից: Կարծում ենք՝ հատկապես ուշադրության արժանի են հոդվածի այն հատվածները, որտեղ նա գրում է պոետի կովկասյան աքսորների, նրա «Պոետի մահը» բանաստեղծության մասին: Եվ չնայած որոշ կենսագրական անճշտություններին, որոնք վերաբերում են Լերմոնտովի աքսորի տարիներին (Արփիարյանը նույնացնում է առաջին և երկրորդ աքսորները), նա անդրադարձել է բանաստեղծի և ժողովրդի կապին, հավատացած է, որ, իրոք, գալու է ահեղ դատաստանի օրը, և պատժվելու են մարդասպանները (ի դեպ, կարծում ենք, որ Արփիարյանի այդ վերլուծություններում, կարծիքներում առկա է նաև ինքնակենսագրական տարրը): Միաժամանակ նա ճիշտ է մեկնաբանում աքսորի պատճառները՝ ընդգծելով, որ նրան «աքսորեցին հանդուգն և խրոխտ բնավորության համար»: Գրող-գրականագետ Արփիարյանի ուշադրության կենտրոնում են կովկասյան ժողովուրդները, նրանց ճակատագրերը, նա հատկապես ընդգծում է Լերմոնտովի՝ իբրև ռուս սպայի և Լերմոնտով բանաստեղծի վարքագծի ու մտածողության տարբերություններն ու բարդույթները. «Իբրև ռուս սպա Լերմոնտով պարտական էր մարտնչիլ ընդդեմ թշնամվուն, բայց բանաստեղծը կմոռնա հայրենիքն ալ, կմոռնա քաղաքականությունն ալ, զնայլած ի տես այն քաջերու, որք չէին

¹⁷ Ռ. Տեր-Գրիգորյան, «Սեղեղիներն Լեցնէին սրտեր հմաիւք սրբազան...». առաջաբան Ա. Ս. Պուշկին, «Կյանքի սայլակը» գրքի, Եր., 1999, էջ 5-14:

¹⁸ «Մասիս», 1887, № 3875, № 3877:

եվրոպական ասպետներ, այլ վայրենի դյուցազունք, կը մեռնեին իրենց լեռներու, իրենց իրավանց ի պաշտպանութիւնս»:

Ընդունելով Ռուսատանը, ռուսական մշակույթը և նրա քաղաքական դերը Կովկասում՝ Արփիարյանը, այնուամենայնիվ, ռուսների կռիվը լեռնեցիների դէմ համարում էր անարդարացի: Նույն հոդվածում վերլուծելով «Կազակական օրոր», «Վալերիք» բանաստեղծութունները՝ Արփիարյանը ներկայացնում է կազակ մոր ծանր ապրումները՝ համոզված է, որ ռուս կազակը, վերադառնալով և հիշելով արյունալի տեսարանները, ինքը ևս պետք է ատի պատերազմը: Հողվածաշարում բարձրացվում են հարցեր, որոնք այսօր էլ շարունակում են արդիական մնալ կովկասյան ժողովուրդների համար: Ազատության, անկախության մասին տրվում են գնահատականներ, որոնք համահունչ էին թուրքական լծի տակ տառապող և իրենց ազգային ինքնուրույնությունը պահպանել ձգտող արևմտահայությանը: Բնական է, որ Արփիարյանը պետք է ջանար թարգմանված տեսնել ազատության համար պայքարի կոչող Լերմոնտովի երկու հայտնի պոեմները՝ «Դասալիքը» (թարգմ. Ա. Փանոսեանի, «Մասիս», 1887) և «Մծիրի» (թարգմ. Լ. Շանթի, «Հայրենիք», 1891): Լերմոնտովի կովկասյան պոեմները բոլոր ժամանակներում մնում են արդիական հավանաբար մարդու համար չափազանց էական մի զգացմունքի՝ մարդու հոգևոր և ֆիզիկական ազատության գաղափարի համար¹⁹:

Լերմոնտովյան պոեզիան լայնորեն ներկայացվել է նաև արևմտահայ այլ պարբերականներում՝ Ք. Քուչներյանի, Հովհ. Պալյանի հետաքրքիր և ինքնատիպ թարգմանություններով²⁰: Կարծում ենք՝ գրականագիտական առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև Տոլստոյի, Գոգոլի, Դոստոևսկու, Տուրգենևի և Գերցենի մասին Արփիարյանի գրած հոդվածները, որոնք միշտ ժամանակին էին, ծանրակշիռ և արդիական:

Արևմտահայությունը մշակութային որոշակի վերելք է ունենում հատկապես երիտթուրքերի սահմանադրությունից հետո՝ 1908 թ., երբ մարդու իրավունքների, խոսքի, մամուլի ազատություններ տրվեցին նաև Թուրքիայի տարածքում ապրող ժողովուրդների համար: 20-րդ դարի սկիզբը արևմտահայ գրական կյանքում նշանավորվում է հատկապես Լև Տոլստոյի ստեղծագործությունների և նրա անհատականության հանդեպ մեծ հետաքրքրությամբ: Արևմտահայ ընթերցողը ծանոթանում է ժամանակի ամենանշանավոր մտածողներից մեկի, գեղարվեստական խոսքի հզոր վարպետի, փիլիսոփայի և մտածողի ստեղծագործություններին: Արևմտահայ գրական շրջաններում շատ հաճախ առանձին են գնահատել Տոլստոյ գրողին ու մտածողին և շատ հաճախ առաջնությունը տվել են մտածողին: «Անտարակույս,- գրում է Մ. Մամուրյանը իր «Լև Տոլստոյ» հոդվածում,- Թուրքոյը սովորական հեղինակներու կարգին չէ, ու իր կենաց և երկասիրությանց մեջ բնատիպ, զորեղ նկարագիր էր, որ հատկապես Ռուսիո ներկայի վիճակին

¹⁹ Այս երկու պոեմների արևմտահայերեն թարգմանությունների մասին մանրամասն տե՛ս **Ռ. Տեր-Գրիգորյան**, Յու. Լերմոնտովի «Դասալիքը» պոեմը արևմտահայերեն, «Կանթեղ», Եր., 2007, էջ 12-20, **նույնի**՝ Լևոն Շանթը ռուս պոեզիայի թարգմանիչ, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 2006, № 1 (118), էջ 148-160:

²⁰ Տե՛ս **Ռ. Տեր-Գրիգորյան**, Հովհաննես Պալյան. բանաստեղծը և թարգմանիչը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2005, №1 (115), էջ 136-145:

խորհրդավոր և այլազան պատկերներ կներկայացնեն, ունի հանճար մը, որով մարդկային կենաց արդար ուղղության մը, բարոյական դրոշմ մը տալու կնկրտի, ավետարանական հրահանգներու քարոզիչն ներքև...»²¹:

Հատկանշական է նաև այն, որ արևմտահայ մտավորականությունը, քաջատեղյակ լինելով եվրոպական մշակույթին, Տոլստոյին և նրա գրական ժառանգությունը գնահատում է որպես համաշխարհային արվեստի գանձարան մտած գործեր, իսկ ստեղծագործական մեթոդը՝ կյանքից բխող և կյանքը ճշմարտացիորեն պատկերող: Խոսելով Լև Տոլստոյի ստեղծագործությունների և դրանց թարգմանությունների մասին՝ գրականագետ Յ. Անդրիկյանը գրում է. «Գրագետ կոմսը այսօրվա գրական աշխարհի ցարն է, իրմեն ավելի մեծ չկա ոչ մեկ երկրի մեջ, ամենեն վեհափառ անունն է, որ ծերացել է: Նա գրականության մեջ այն բանը կսիրե, ինչը որ իրական է: Անոր կյանքն էլ այդպես եղած է ...»²²:

Լև Տոլստոյի մասին այդ տարիներին հոդվածներ են տպագրում «Արևելյան մամուլ» (Յ. Նավարյան, «Լև Տոլստոյ», 1902), «Հայկունի» (Ա. Հնայակ, «Կոմս Լեոն Թոլսթոյ», Ն. Թորոսյան, «Լև Նիկոլաևիչ Թոլսթոյ», 1910), «Բյուզանդիոն» (Բ. Քեչյան, «Կոմս Լ. Տոլստոյ», 1910) և այլ պարբերականներ, որտեղ հեղինակները ոչ միայն ձգտել են վերլուծել և տալ նրա ստեղծագործությունների ճիշտ գնահատականը, այլև անհրաժեշտ են համարել դրանց թարգմանությունը արևմտահայության համար: Ուշադրության արժանի է նաև 1911-1914 թթ. Կ. Պոլսում հրատարակվող «Կայծ» ամսագրի պատասխանատու խմբագիր Էդուարդ Ամատունու գրական և թարգմանական գործունեությունը, որը կարևոր դեր է խաղացել երիտասարդության շրջանում առաջադիմական գաղափարների տարածման գործում: «Պատերազմ և խաղաղություն» վեպի իր թարգմանության առիթով գրքի առաջաբանում նա գրում է. «Այլևս ժամանակավրեպ է եվրոպական, մասնավորապես ֆրանսիական ռոմանտիք գրականության և իրենց դերը կատարած ու հինգած թոմանները հրամցնելը, որոնք ժամանակի հարցերուն պատասխանելու, կենսական պահանջներուն բավարարություն տալու փոխարեն մարդուն իրականութենեն դեպի երևակայության ու հեքիաթային արկածախնդրության աշխարհը կը տեղափոխեն»²³:

Արևմտահայ քննադատությունն անդրադարձել է նաև Ա. Չեխովի, Գարշինի, Անդրեևի ստեղծագործություններին, փորձել գնահատել նրանց ստեղծագործությունները ժամանակի հասարակական-քաղաքական խնդիրների, հարցադրումների, իրադարձությունների համատեքստում:

Այսպես, օրինակ՝ «Ծաղիկ» ամսագրում տպագրվում է Ն. Աղբալյանի հոդված-ուսումնասիրությունը, որտեղ նա արևմտահայ ընթերցողին ծանոթացնում է Ա. Չեխովի ստեղծագործություններին, դրանց թեմատիկ և գաղափարական ուղղվածությանը, այն արդիական հարցադրումներին, որոնց անդրադառնում է գրողը և նրա գրելաոճին: Նա կերտում է գրողի դիմանկարը և բնութագրում Չեխովին, որպես այնպիսի գրողի, ով «...կեան-

²¹ Մ. Մամուրյան, Լև Տոլստոյ, «Արևելագիտական մամուլ», 1907, № 7, էջ 603-637:

²² «Գեղունի», Վենետիկ, 1909, № 6:

²³ Էդ. Ամատունի, Մի քանի խոսք. Առաջաբան «Պատերազմ և խաղաղություն» գրքի, Կ. Պոլիս, 1911, էջ 3-4:

քի ժխտորին բարձր կը պահէ աչքն ու ականջը, ան կը տեսնէ ամէնուր ընկեր-ոգիներ, որոնք աշխարհի ամէն անկիւնէն «առանց լեզուի ու կրոնի խտրութեան» կը խոսեն կեանքի առեղծուածի վրայ»: Խոսելով Չեխովի պատմվածքների մասին՝ Աղբալյանը գրում է. «Կեանքի անհուն բազմազանութեան մէջ՝ Չեխովը կը հետաքրքրեն երկու մեծ և համատարած երևույթներ – մարդուն տխմարությունը և կեանքի անհմաստ ընթացքը, որոնք սերտ կապուած են իրարու հետ և արգելք են մարդու երջանկութեան կամ ուրիշ խօսքով՝ բնազդական ուժերու հզորությունը և մարդու մտքին ու խղճին անզորությունը այդ ուժերը սանձահարելու, և՛ իբրև հետեւանք այդ անսովոր դրութեան՝ անթիւ աններդաշնակ և խորտակուող կեանքը: Մեր կարծիքով՝ այս է այն վայրը ուր կանգնած է Չեխովի մտքին ճրագը, լուսավորելու համար կեանքի իրար կտրող մութ ալիքները»²⁴:

Հարկ է նշել, որ արևմտահայ քննադատության ուշադրության կենտրոնում են եղել նաև ռուս դասական գրականությունից կատարված թարգմանությունները: Արևմտահայ մտավորականությունն այս հարցին մոտենում էր սրտացավորեն՝ թարգմանությունները համարելով ազգային գրականության հարստացման և լեզվի զարգացման կարևորագույն ուղիներից մեկը: Պատահական չէ, որ այդ թվականների պարբերականներում հաճախ կարելի է տեսնել ռուս գրողի մասին հոդված, որն ուղեկցվում էր նաև ստեղծագործություններից արված թարգմանություններով: Այդպիսի նպատակ էր հետապնդում Զ. Քուշներյանը, երբ Նեկրասովին նվիրված իր հոդվածում գրում էր. «...ճարտարագույն գրիչ մը, եթե ոչ բոլոր՝ գոնե ընտրավ թարգմանելով՝ մեր հայերեն վսեմ և ճոխ լեզվով Նեքրասովին ոգելից տաղերը, կը հարստացնէ հայկական մատենագրությունը»²⁵:

Գրականագիտական խորը վերլուծությամբ և նյութի իմացությամբ են գրված նաև Գ. Մալխասի երկու հոդվածները, որոնք նվիրված են Պ. Նուբարյանի՝ Կռիլովի և Լա Ֆոնտենի առակների արևմտահայերեն թարգմանություններին: Քննադատելով այդ թարգմանությունները և անդրադառնալով առակագիրների ստեղծագործական ոճի առանձնահատկություններին՝ նա գտնում է, որ պետք է խիստ տարբերակել բանաստեղծական բնածին տաղանդը ոտանավոր շինելու վարժանքից, «վարժություն մը՝ որ առանձին արժեք չունի, եթե չընկերանա բեղմնավոր երևակայության, նուրբ զգայության, որոշ գաղափարներու ճկուն ոճի հետ՝ որոնց միացումն միայն կը մարմնավորվի ճշմարիտ բանաստեղծը»²⁶:

Այսպիսով, ռուս դասական գրականությանը նվիրված արևմտահայ մտավորականության գնահատականների, վերլուծությունների, ուսումնասիրությունների համառոտ քննությունն անգամ թույլ է տալիս ասելու, որ հայ-ռուսական գրական առնչությունների պատմության հետաքրքիր և քիչ ուսումնասիրված էջերից են նաև արևմտահայ-ռուսական գրական առնչությունները, որոնք հայ գրականության պատմության զարգացումներում իրենց ուրույն տեղն ու դերն ունեն:

²⁴ **Ն. Աղբալյան**, Անտոն Չեխով, «Ծաղիկ», Կ. Պոլիս, 1905, № 2, էջ 579-583:

²⁵ «Բազմավէպ», 1878, հ. ԼԶ, № 1, էջ 169-173:

²⁶ «Մասիս», 1901, № 25, էջ 412-416:

РУЗАН ТЕР-ГРИГОРЯН – *Русские классики в оценке западноармянской критики.* – История переводов, изданий и переизданий произведений русских классиков на западноармянский язык, изучения и оценки их творчества западноармянской литературно-критической и общественной мыслью насчитывает десятилетия. Отмечаются периоды повышенного, особо острого интереса к русской литературе и культуре: это 1844–1880, 1880–1900, 1900–1914 гг.

Статьи, исследования, очерки, рецензии, сообщения западноармянских литераторов (Г. Айвазовского, К. Кушнеряна, А. Чопаняна, А. Арпиаряна, Г. Андрияна, Н. Агбальяна, Л. Башальяна, М. Мамуряна и др.) раскрывают новые, малоизученные страницы армяно-русских литературных связей.

RUZAN TER-GRIGORYAN – *Russian Classical Literature in the Assessment of Western Armenian Criticism.* – The article discusses the adaption of creativity of Russian classics by Western Armenian literature and social thought.

Translations, editions and re-editions of works of Russian classics into Western Armenian language, studying and assessment of their creativity by Western Armenian literary-critical and social thought has history of decades. The periods of very broad and keen interest in Russian culture and literature were 1844-1880, 1880-1900, 1900-1914.

Articles, researches, essays, reviews, reports of Western Armenian literary figures (H. Aivazovsky, K. Kushneryan, A. Chopanyan, A. Arpiaryan, G. Andrikyan, N. Aghbalyan, L. Bashalyan, M. Mamuryan, etc.) open up new, little-studied pages in the history of the Armenian-Russian literary relations.